ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ. «ԹԲԻԼԻՍԻՆ ԻՆՁ ՀԱՄԱՐ ՀԱՐԱՉԱՏ ՔԱՂԱՔ Է»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԻՆ ՀՐԱՎԻՐԵՑԻՆ ՎՐԱՑ ՄԱՐԶԱԿԱՆ ԷԼԻՏԱՅԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ

Թբիլիսիի կենտրոնում գտնվող «Շարդեն» ժամանցի թաղամասում բացվեց «One side olimp club» ակումբը, որտեղ ամեն չորեքշաբթի կանցկացվեն Վրաստանում ապրող, տարբեր մարզաձեւերում մարզական բարձունքներ նվաճած, հանրաճանաչ անձանց՝ օլիմպիական խաղերի, աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոնների հետ հանդիպումներ:

Հատկանշական է, որ ակումբի գործարկման առաջին իսկ նման հանդիպմանը ակումբի կազմակերպիչները, ճանաչված մարզական մեկնաբան Ջամլետ Խուխաշվիլու ղեկավարությամբ, հրավիրեցին Յուրի Վարդանյանին՝ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան, ծանրամարտի մարզաձեւում օլիմպիական խաղերի, աշխարհի եւ Եվրոպայի իննակի չեմպիոն, համաշխարհային 43 ռեկորդների հեղինակ (ընդ որում, անցած 34 տարիների ընթացքում նրա սահմանած ռեկորդներն առ այսօր չեն գերազանցվել):

Հավաքվածները, որոնց թվում էին վրաստանցի օլիմպիական խաղերի, աշխարհի եւ Եվրոպայի մի քանի տասնյակ չեմպիոն, ինչպիսիք էին բարձրացատկորդ Ռոբերտ Շավլլակաձեն, ծանրամարտիկներ Ռաֆայել Չմշկյանն ու Գիորգի Ասանիձեն, ըմբշամարտիկ Ռոման Ռուրուան եւ ուրիշներ, Յուրի Վարդանյանին դիմավորեցին բուռն ծափահարություններով, ողջագուրումով, ինչը վրաց զգայական հասարակայնության կողմից Յուրի Վարդանյանի նկատմամբ ջերմ վերաբերմունքի ակնհայտ արտահայտությունն էր:

Իր ելույթում Յուրի Վարդանյանը նման գեղեցիկ ու հետաքրքիր հանդիպման համար շնորհակալություն հայտնեց կազմակերպիչներին:

- Երջանիկ եմ, որ նորից Թբիլիսիում եմ, իմ մանկական հիշողությունների քաղաքում,- իր խոսքում ասաց Յուրի Վարդանյանը: - Մինչեւ դպրոցիս ավարտը, ինձ բերում էին Թբիլիսի, որտեղ մորաքույրս էր ապրում, եւ ես ամեն տարի իմ դպրոցական արձակուրդներն անցկացնում էի Վրաստանի մայրաքաղաքում: Բնականաբար ունեի շատ բարեկամ-ընկերներ եւ նրանց թիվն ավելացավ մարզական ասպարեզի իմ վրաց բարեկամների շնորհիվ:

Երեկոյին Թենգիզ Պաչկորիան Յուրի Վարդանյանին նվիրեց ամերիկյան ՆԲԱ լիգայում հանդես եկող վրաց ճանաչված բասկետբոլիստ, Վրաստանի հավաքականի անդամ Զազա Փաչուլիայի մարզաշապիկը:

Հանդիպմանը բարձրացվեց Վրաստանի եւ Հայաստանի միջեւ մարզական համատեղ միջոցառումների անցկացման հարցը: Ներկաները Հայաստանի դեսպանին խնդրեցին հնարավորինս անել երկու երկրների միջեւ տարբեր մարզաձեւերում, հատկապես ֆուտբոլի, մրցույթ-հավաքների կազմակերպման համար:

- Համարեք, որ ձեր խնդրանքն ընդունվել է եւ մենք Թբիլիսիում ու Երեւանում տարբեր մարզաձեւերում կկազմակերպենք մեր եղբայր երկրների մարզիկ-մարզուհիների հանդիպումները:

ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ

ԿՐԹՕՋԱԽ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԴՊՐՈՑ

«Հայաստանի հանրային գրադարանում հաճախ եմ ընթերցում ձեր թերթը, քանզի «Վրաստան» պարբերականի շնորհիվ տեղեկություններ եմ ստանում ինձ հարազատ վիրահայ համայնքի կյանքի, եղբայրական Վրաստանում տեղի ունեցող անցուդարձի եւ այլնի մասին: Ամուր ու խորն են մեր գերդաստանի կապերը Վրաստանի, մասնավորապես Թբիլիսիի հետ: Այդ հիանալի քաղաքում է ապրել եւ թբիլիսյան կոլորիտով ոգեշնչվել իմ պապը, Թիֆլիսի Ներսիսյան ճեմարանի սան՝ Հարություն Հարությունյանը:

Այս տարի լրանում է թիֆլիսյան այդ հայտնի հանրակրթարանի հիմնադրման 190-ամյակը: Օգտվելով առիթից ձեզ եմ ուղարկում Ներսիսյան դպրոցի վերաբերյալ հոդվածս:

Հարգանքներով՝ Տիգրան Հարությունյան»:

Երեւանից ստացված այս նամակի հեղինակը ռադիոլոգ Տիգրան Հարությունյանն է: Շնորհակալություն ենք հայտնում վրաց հողում հայկական առաջին հանրակրթարանի մասին պատմող հոդվածի համար եւ այն ներկայացնում ենք ձեր ուշադրությանը:

Նրա կողմից Թիֆլիսում հիմնած դպրոցը հաջողությամբ գործում էր եւ 1837 թվականին ստացավ հոգեւոր ճեմարանի կարգավիճակ, որը սկսեցին կոչել Ներսիսյան դպրոց:

Կարճ ժամանակում դպրոցն արժանացավ Անդրկովկասում ուսումնական լուրջ հաստատության վարկանիշի եւ ընդունվեց որոշում դպրոցի նոր շենքի կառուցման մասին: Նոր դպրոցի հիմքերը գցվեցին 1909 թվականին, Թիֆլիսի Սվանեթիսուբանի թաղամասում, ներկայիս Թբիլիսիի Խրամգէսի փողոցի թիվ 1 համարում: Հայկական դպրոցի շինարարության համար հողատարածքը գնեց ժամանակին հայտնի բարեգործ Ալեքսանդր Մանթաշեւը, որը դրա համար վճարեց 250 հազար ռուբլի:

1911 թվականից դպրոցը սկսեց գործել նոր շենքում: Դասավանդման պայմանների բարելավումը զգալիորեն նպաստեց ուսուցման որակի բարձրացմանը: Հոգեւոր առարկաների հետ միասին այստեղ դասավանդում էին հայոց լեզու եւ գրականություն, պատմություն եւ մաթեմատիկա: 1924 թվականին դպրոցը հանդիսավորությամբ նշեց իր գործունեության 100-ամյակը: Այդ ժամանակի համար այն վերածվել էր ոչ միայն կրթական, այլեւ մշակութային խոշոր կենտրոնի, քանզի այդտեղ նաեւ ներկայացումներ էին դրվում:

Դպրոցի ղեկավարությունը ձգտում էր աշակերտներին հավաքել նվազ եկամուտ ունեցող հայկական ընտանիքներից: Այդ նպատակով, դպրոցի մանկավարժները մեկնում էին Հայաստանի ամենախուլ շրջաններ, այնտեղ գտնում շնորհալի երեխաների, անկախ նրանց նյութական վիճակից:

Գաղտնիք չէ, որ ցարական Ռուսաստանի գյուղական վայրերում, առավել եւս կայսրության ծայրամաս հանդիսացող Հայաստանում կենսամակարդակը շատ ցածր էր: Օրինակ, Շամշադինի շրջանի Թոազ գյուղում, որտեղ ծնվել է իմ պապը, նախնադարյան համայնական կարգ էր տիրում: Բնակիչները չունեին անգամ կացին ու սղոց: Մարդիկ հիմնականում սնվում էին հացով, այն թրջելով թթվաջրի մեջ, հազվադեպ էին ուտեստում պանիր եւ գրեթե երբեք միս: Բնականաբար, նման պայմաններում կրթության մասին խոսք լինել անգամ չէր կարող: Ուստիեւ նման գյուղերում հայտնված Ներսիսյան ճեմարանի մանկավարժներն ավելի քան ցանկալի էին: Ծնողների հետ կարճ զրույցից հետո, նրանք 12 քույր-եղբայրներից ընտրեցին հենց իմ պապին՝ Հարություն Հարությունյանին: Այսպիսով, նա հայտնվեց Թիֆլիսի հանրահայտ Ներսիսյան դպրոցում, որտեղ հիանալի կրթություն ստացավ ոչ միայն հումանիտար, այլեւ՝ բնագիտական:



190 տարի առաջ, 1824 թվականին նահանգական Թիֆլիս քաղաքում բացվեց առաջին հանրակրթական միջնակարգ ուսումնական հաստատությունը: Դրան մեծապես նպաստեց վիրահայ թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Ներսեսը: Դպրոցի բացման հետ մեկտեղ, արքեպիսկոպոսը տեղի բնակիչներին աշխատանքով ապահովելու նպատակով, դարձավ ֆաբրիկաների եւ արհեստանոցների բացման նախաձեռնող: Նա հնարավորինս նպաստում էր առեւտրի զարգացմանը, խրախուսում տեղի վաճառականներին: Ներսես արքեպիսկոպոսի գործունեությունը արժանագույն գնահատվեց հայ ժողովրդի կողմից, եւ նա 1843 թվականին ընտրվեց Ամենայն Հայոց կաթողիկոս եւ պատմության մեջ մտավ որպես Ներսես Հինգերորդ կամ Ներսես Աշտարակեցի անունով:

Դպրոցը դադարեցրեց գործունեությունը 1824 թվականին: Դրան մեծապես նպաստեց վիրահայ թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Ներսեսը: Դպրոցի բացման հետ մեկտեղ, արքեպիսկոպոսը տեղի բնակիչներին աշխատանքով ապահովելու նպատակով, դարձավ ֆաբրիկաների եւ արհեստանոցների բացման նախաձեռնող: Նա հնարավորինս նպաստում էր առեւտրի զարգացմանը, խրախուսում տեղի վաճառականներին: Ներսես արքեպիսկոպոսի գործունեությունը արժանագույն գնահատվեց հայ ժողովրդի կողմից, եւ նա 1843 թվականին ընտրվեց Ամենայն Հայոց կաթողիկոս եւ պատմության մեջ մտավ որպես Ներսես Հինգերորդ կամ Ներսես Աշտարակեցի անունով:

Դպրոցի ղեկավարությունը ուշադրությամբ հետեւում էր ոչ միայն աշակերտների ուսուցման եւ բնակության պայմաններին, այլեւ հնարավորինս օգնում էր նյութական կարիք ունեցողներին: Այդ մասին են վկայում պապիս հիշողությունները, որտեղ նա պատմում է, թե ինչպես դպրոցի տնօրենը մեկ անգամ չէ, որ իրեն փող է տվել հագուստ եւ սնունդ գնելու համար:

Դպրոցն ավարտելուց հետո Հարություն Հարությունյանին ընդունեցին արդեն խորհրդային ուսուցման մեթոդներով գործող Երեւանի համալսարանի երրորդ կուրսը: Հետագայում նա դարձավ Խորհրդային Միության գրողների միության անդամ, հայերեն թարգմանեց համաշխարհային գրականության այնպիսի գլուխգործոցներ, ինչպիսիք են Ալեքսանդր Դյումայի «Երեք հրացանակիրները», Մայն Ռիդի «Անգլուխ ձիավորը», Բոլեսլավ Պրուտի «Փարաոնը», Լեոն Ֆեխտվանգների «Տրոյան» եւ այլն: Ահա այսպես, գյուղական անորոշությունից դուրս եկած պատանին Ներսիսյան դպրոցի շնորհիվ դարձավ կրթված անձնավորություն, օգտակար իր երկրին ու ժողովրդին: Ցավոք, Ներսիսյան դպրոցի 100-ամյակի տարում, ելնելով խորհրդային գաղափարախոսությունից, դպրոցը փակվեց:

Իր գործունեության տարիների ընթացքում դպրոցում տարբեր ժամանակներում սովորել են մշակույթի եւ քաղաքականության այնպիսի նշանավոր ներկայացուցիչներ, ինչպիսիք են Պերճ Պռոշյանը, Ղազարոս Աղայանը, Հովհաննես Թումանյանը, Խաչատուր Աբովյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Անաստաս Միկոյանը... Վերջինս իր հիշողություններում Ներսիսյան դպրոցի ուսուցման մասին մակերեսորեն է հիշատակում եւ դա զարմանալի չէ, չէ՞ որ նրա հիշողությունները հրատարակվեցին խորհրդային իշխանության օրոք: Թեպետ Միկոյանը բոլոր հարմար առիթներով բաց չէր թողնում իր նախկին համադասարանցիների հետ հանդիպելու հնարավորությունը, հանդիպումներ, որոնց կազմակերպման նախաձեռնողը հաճախ ինքն էր լինում:

«ՎՐԱՍՏԱՆԻ» ՏԵՂԵԿԱՏՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑՆՈՒՄ Է ՄԵԿԸ, ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՆՔ ԲՈԼՈՐԻՆ

Խորագիրը վարում է աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարության հասարակության հետ կապի դեպարտամենտի պետ, Վրաստանի հեռուստահաղորդումների խորհրդական ԻՐԻՆԵ ՂԼՈՆՏԻՆ:

ՀԱՐՑ. *Սոցիալապես անպաշտպան հաշմանդամ եմ, ունեմ տեսողության հետ կապված հիմնախնդիրներ, ստանում եմ հաշմանդամության կենսաթոշակ եւ ընտանեկան օգնություն 22 լարիի չափով: Հարեւաններս ասացին, որ ինձ հասնում է 60 լարիի օգնություն, չգիտեմ՝ ո՞ւմ դիմեմ այդ հարցով:*

Ի.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ծալկա

ՊԱՏԱՍԽԱՆ. Որպեսզի 22 լարիի փոխարեն ստանաք 60 լարիի օգնություն (երկու տեսակի օգնության ստացումը բացառվում է), հարկ է գրանցվել տվյալների բազայում, եւ ստանալ համապատասխան վարկանիշային միավորներ: Եթե անձամբ դիմել չեք կարող, պետք է ձեր մերձավորներից մեկը ձեր անունից դիմի սոցիալական սպասարկման գործակալության շրջանային ծառայությանը՝ ըստ բնակության վայրի:

ՀԱՐՑ. *22 տարեկան եմ, ունեմ 3 տարեկան երեխա, որը, ճիշտ է, կրում է հոր ազգանունը, սակայն հայրը երեք տարի է անհետացել է, ընդհանրապես երեխայով չի հետաքրքրվում: Պարզաբանեք խնդրում եմ, կարո՞ղ եմ գրանցվել որպես միայնակ մայր:*

Մ.ՎԱՐԴԵՐԵՍՅԱՆ

Բորժոմի

ՊԱՏԱՍԽԱՆ. Ձեր կողմից ներկայացված տվյալներից ելնելով, դուք միայնակ մայր համարվել չեք կարող: Ձեր որդին, որը կրում է հոր ազգանունը, օգտվում է բոլոր այն իրավունքներից, որոնք տրված են օրինականորեն գրանցված ամուսնությունների արդյունքում ծնված երեխաներին: Այնպես որ, եթե հայրը չի մասնակցում երեխայի դաստիարակության գործին, ապա դուք իրավասու եք երեխային խնամելու համար դատարանի միջոցով հորից պահանջել ալիմենտ:

ՀԱՐՑ. *25 տարեկան եմ, ունեմ երկու երեխա, կրտսերը երկու ամսական է: Հանրային ծառայությունից բարձր աշխատավարձ եմ ստանում, ամուսինս եւ մայրս եւս աշխատում են, սակայն աշխատավարձը ցածր է: Ցանկանում եմ դուրս գալ աշխատանքից, իսկ երեխայի խնամքը թողնել մորս վրա: Հնարավո՞ր է, արդյոք մայրս վերցնի անվճար արձակուրդ եւ խնամի երեխային:*

Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ախալցիխե

ՊԱՏԱՍԽԱՆ. Վրաստանի աշխատանքի օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, երեխայի (թոռան) խնամքի համար արձակուրդ կարող է ստանալ տատիկը կամ ցանկացած այլ անձնավորություն, որը կզբաղվի երեխայի խնամքով: Նկատի ունեցեք, որ գործող աշխատանքի օրենսդրության համաձայն, կանանց հղիության, ծննդաբերության եւ երեխայի խնամքի համար, ընդհանուր առմամբ, տրվում է վճարովի եւ անվճար 730 օրացուցային օրվա արձակուրդ:

ՀԱՐՑ. *Լսել եմ, որ մոտ ժամանակներս կենսաթոշակներն ավելացվելու են: Հետաքրքիր է, ինչ կարգով է իրականացվելու կենսաթոշակի չափի հաշվառումը, եթե նկատի ունենանք դրա ավելացման հնարավորությունը: Ավելի կոնկրետ, դրա համար անհրաժե՞շտ է, արդյոք, հատուկ դիմել սոցիալական սպասարկման գործակալությանը եւ ներկայացնել աշխատանքային ստաժի տարիները հաստատող փաստաթուղթը: Նշեմ, որ նման դիմում եւ փաստաթղթեր ներկայացրել եմ տասը տարի առաջ, երբ նշանակեցին կենսաթոշակը:*

Հ.ՍԱՐԵՑՅԱՆ

Բաթումի

ՊԱՏԱՍԽԱՆ. «Պետական կենսաթոշակի մասին» 2006 թվականի հունվարի 1-ից գործող օրենքի համաձայն, սահմանված կենսաթոշակի չափի փոփոխության դեպքում, վերահաշվարկումն իրականացվում է ավտոմատորեն, Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարության վերահսկողության ներքո գտնվող հանրային իրավունքի իրավաբանական անձ՝ սոցիալական սպասարկման գործակալության շրջանային ծառայությունում, ըստ կենսաթոշակառուի գրանցման վայրի: Ավելացնենք, որ, ներկա դրությամբ, կենսաթոշակի չափի ավելացման վերաբերյալ կոնկրետ որոշում չի ընդունվել, եթե այդ հարցում լինեն փոփոխություններ, դուք կտեղեկացվեք:

Ð²ðò – ä²î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Ü°ð

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ը ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՆ Է

Թարգմանիչները 1991-ից ի վեր ունեն իրենց պրոֆեսիոնալ տոնը: Թարգմանիչների միջազգային ֆեդերացիան սեպտեմբերի 30-ը հայտարարել է Թարգմանիչների միջազգային օր:

Սեպտեմբերի 30-ը պատահական չի ընտրվել, քանի որ 420թ. այդ օրը մահացել է Հերոնիմոս Ստրիդոնսկին, ով, 386-ին բնակություն հաստատելով Բեթղեհեմում, լատիներեն է թարգմանել Աստվածաշունչը: Հերոնիմոս Ստրիդոնսկին համարվում է թարգմանիչների հովանավորը: Նա շատ է ճանապարհորդել եւ կատարել է ուխտագնացություն դեպի Սուրբ Երկիր: Ուսումնասիրել է եբրայերեն եւ խալդյան լեզուներ:

Թարգմանչի մասնագիտությունը հնուց ի վեր ճանաչված է որպես ամենահեղինակավորներից ու պահանջվածներից մեկը: Առաջին թարգմանիչները գործել են Հին Եգիպտոսում եւ արդեն այն հեռավոր ժամանակներում պատվավոր բնակիչներ էին: Օտար լեզուների գիտակներն առանձնակի դեր էին խաղում Հին Հունաստանում, որը սերտորեն շփվում էր Արեւելքի պետությունների հետ: Եթե չլինեին նրանք, հնարավոր է մեր մշակութային զինանոցում չլինեին Աստվածաշնչի գրքերից շատերը:

Ðº î²øðøÆð ¾

ԻՆՉ Է ՀՈՒՇՈՒՄ ԵՐԱԿԱԶԱՐԿԸ

Բժիշկները, գլխով հիվանդի մոտ, առաջին հերթին ստուգում են երակազարկը, ապա հարցուփորձ անում յավերի, անհանգստացնող միտումների մասին: Հետաքրքիր է, երակազարկով ի՞նչ են կարողանում պարզել:

Վ.Վարդանյան

Բաթումի

Սրտի կծկումների սակավաթիվ լինելը (որպեւում 60 զարկից պակաս)՝ բրադիկարդիան, կարող է ֆիզիոլոգիական լինել, առողջ շատ մարդկանց երակազարկը, հատկապես նրանց, ովքեր ֆիզիկական աշխատանք են կատարում, հաճախ որպեւում մինչեւ 50-ի է հասնում: Այդ պատճառով յուրաքանչյուրը պետք է իմանա, թե նորմալ վիճակում որքան է իր երակազարկը: Պաթոլոգիկ բրադիկարդիա է գրանցվում վահանաձեւ գեղձի հիվանդության, դեղնախտի եւ որոշ նյութերով թունավորվելու ժամանակ: Երբեմն դա նաեւ սրտի հիվանդության մասին է վկայում:

Որպեւում 100 զարկը վկայում է տախիկարդիայի մասին: Սա ոչ թե հիվանդություն է, այլ ախտանշան, քանի որ այն կարող է առաջանալ տարբեր հիվանդությունների դեպքում: Տախիկարդիայի առավել տարածված պատճառները վեգետատիվ նյարդային, էնդոկրին համակարգերի խանգարումներն են:

Մարզվող մարդկանց երակազարկն ավելի դանդաղ է, քան նրանց հասակակից չմարզվողներինը (որպեւում սրտի զարկերի նորմալ քանակը 70-ն է): Կանանց երակազարկը միջինում 80-84 է, մինչեւ 3 տարեկան երեխաներինը՝ 100-ից ավելի: Ներշնչման ժամանակ երակազարկն արագանում է, քնած եւ պառկած ժամանակ դանդաղում:

Երակազարկի հաճախականությունն աճում է մարմնի ջերմաստիճանի բարձրացմանը զուգընթաց: Այդ պատճառով, եթե ձեռքի տակ ջերմաչափ չկա, կարելի է չափել հիվանդի սրտի զարկերը եւ ըստ դրա մոտավորապես որոշել մարմնի ջերմաստիճանը: Ջերմաստիճանի 1 աստիճանով բարձրացմանը զուգընթաց երակազարկերն ավելանում են որպեւում միջին հաշվով 8-10 հատ:

Շնչառական շարժումների եւ սրտի կրճատումների թվերի հարաբերակցությունը կայուն է, մոտավորապես 1-ը 4-ի հարաբերությամբ: Դա իմանալով կարելի է գնահատել թոքերի եւ սրտի աշխատանքը:

² è àÔæ² ä ²ÐàôÂÚàôÜ

ՏԱՍԸ ՀԱԶԱՐ ՄԱՆՐԷ՝ ԱՌՈՂՋ ՕՐԳԱՆԻԶՄՈՒՄ



Լսել եմ, որ յանկացած օրգանիզմում, այդ թվում նաեւ առողջ օրգանիզմում բազում բակտերիաներ կան: Եթե այդպես է, ապա օրգանիզմը ինչպե՞ս կարող է լինել առողջ:

Ն.Պետրոսյան

Նինոծմինդա

Իրոք, առողջ մարդու օրգանիզմում ապրում է շուրջ 10 հազար տեսակի մանրէ: Այս եզրակացությանն են հանգել ամերիկացի այն գիտնականները, որոնք մասնակցել են «Մարդու միկրոբիոմը» անվանումն ստացած ընդգրկուն ծրագրին:

Ինչպես պարզել են հետազոտողները, այդ միկրոօրգանիզմներից շատերն անվնաս են կամ նույնիսկ օգտակար: Միեւնույն ժամանակ, յուրաքանչյուր մարդու, նույնիսկ բացարձակ առողջ մարդու օրգանիզմում միշտ ներկա են ոչ մեծ քանակությամբ վնասակար մանրէներ, որոնք որոշակի պայմաններում առաջացնում են տարբեր հիվանդություններ:

Հետազոտման համար գիտնականները վերցրել են 18-ից մինչեւ 40 տարեկան 242 մարդու թքի, արյան, մաշկի եւ կղանքի 5 հազար նմուշներ, որոնց առողջությունը նախապես հանգամանորեն ստուգվել է: Հետազոտություններին մասնակցել է շուրջ 200 գիտնական 80 հետազոտական ինստիտուտներից: Հետազոտությունների համար ծախսվել է 173 միլիոն դոլար:

Ընթացիկ տարվա հետազոտության արդյունքները հունիսի 13-ին հրապարակվել են «Նեյչուր» եւ PLoS գիտական հանդեսներում:

ՌՈԲՈՏԱՏԵԽՆԻԿԱ

ՌՈԲՈՏՆԵՐՆ ՈՒ ՁԵՐ ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ. ՈՐՏԵ՞Ղ Է ԹԱՔՆՎԱԾ ՎՏԱՆԳԸ

Վաղ թե ուշ ռոբոտները կստրկացնե՞ն մարդկանց: Անհեթեթություն: Բայց կա ռոբոտներին առնչվող մեկ այլ խնդիր, որը սովորաբար մենք անտեսում ենք:

Հաշվողական մաթեմատիկայի ոլորտում աշխատող գիտնական Զոսս Ռայթը ռոբոտներին սովորեցնում է հունից հանել մարդուն: Ռայթն աշխատում է Նաո անունով մարդանման ռոբոտի հետ: Փորձի էությունն է՝ Նաոն փողոցում ցուցադրաբար մոտենում է մարդկանց, խառնվում նրանց անձնական գործերին, զզվեցնում իր ներկայությամբ՝ մի խոսքով փորձում հունից հանել: Օրինակ, անծանոթի հետ հանդիպման դեպքում Նաոն կարող է հենց տեղում համացանցում դիմացինի մասին տեղեկություններ որոնել, կամ միանալ նրա բջջային հեռախոսին, պարզել, թե դրա սեփականատերն այդ օրը որտեղ է եղել եւ եթե ճաշել է ռեստորանում հարցնել՝ համե՞ղ էր ապուրը:



Նաոի մասնակցությամբ փորձը «Մարդիկ եւ ռոբոտները հանրային միջավայրում» ծրագրի մի մասն է: Ծրագրի նպատակն է հետազոտել մարդ-ռոբոտ փոխհարաբերություններն ու շփումը, պարզել, թե ի՞նչ է լինում, երբ չարաճճի մեքենան մեր մասին գիտի ավելին՝ քան մենք կարծում ենք: Ռայթը մեկն է այն բազմաթիվ գիտնականներից, ովքեր փորձում են հասկանալ՝ կարո՞ղ ենք արդյոք վստահել ռոբոտներին, որոնք ուր որ է վերջնականապես կդառնան մեր կյանքի մի մասը: Եթե հավատանք Հոլիվուդին՝ ամենամեծ վտանգը գալիս է ռոբոտների աներեւակայելի ուժից եւ ինտելեկտից: Այդ վտանգը սպառնում է մարդկության գոյությանը:

Սակայն գիտնականներն ու հետազոտողները պնդում են, որ ռոբոտների եւ ռոբոտատեխնիկայի ապագան այլ կերպ է ուրվագծվելու: Եթե ռոբոտները տարածենք ամենուր, ապա նրանք կկարողանան մշտապես հետեւել մեզ եւ պահպանել մեր մասին հավաքած տեղեկությունը: Հետեւաբար՝ ամենամեծ վտանգը՝ մեր անձնական կյանքի սպառնալիքն է: Գուցե անհանգստանալու ժամանա՞կն է: Արդեն տասնյակ տարիներ ռոբոտներն աշխատում են արդյունաբերության տարբեր ճյուղերում: Ռոբոտների մի մասը պատասխանատու է մեր տների մաքրության համար, այլ ռոբոտներ հնարավոր է շուտով սկսեն մեր թիկնապահը դառնալ, կամ հոգ տանել տարեց մարդու մասին: Միայն անցած մեկ տարում Google ընկերությունը, որ լրջորեն մշակում է առանց վարորդի մեքենա ունենալու ծրագիրը, գնել է ռոբոտատեխնիկայի ոլորտում աշխատող ութ ընկերություն: Սակայն, չնայած տեխնոլոգիաների եւ արհեստական ինտելեկտի հարցերում հաջողություններին՝ դեռ վաղ է խոսել բանական ռոբոտի մասին:

(Շարունակելի)

ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆ

ԿՈԼՈՒՄԲՈ՞Ս, ԹԵ՞ ԷՐԻԿՍՈՆ

Իսկ դուք գիտե՞ք, որ առաջին եվրոպացին, որը ոտք է դրել Ամերիկայի ափերին, ամենեւին էլ Քրիստոփոր Կոլումբոսը չի եղել, ինչպես հայտնի է շատերին, այլ ոչ հայտնի Լեյֆ Էրիկսոնը, եւ դա տեղի է ունեցել դեռեւս 10-րդ դարի սկզբներին:

Լեյֆ Էրիկսոնը սկանդինավցի ծովագնաց էր, որի ընտանիքը Նորվեգիայից արտաքսվել էր Իսլանդիա, իսկ այնտեղից էլ ստիպված էր եղել փրկվել փախուստի միջոցով: Նրանք բնակություն են հաստատել Գրենլանդիայում: Ըստ մեզ հասած տեղեկության, մոտավորապես մ.թ. 1000 թ. Լեյֆը 35 հոգանոց իր թիմով առաջին անգամ ոտք է դրել Հյուսիսային Ամերիկայի ափին: Ավելի ուշ այդ ճամփորդությունը փորձել է կրկնել Լեյֆի եղբայր Տորվալդը, սակայն դեպի նոր մայրցամաքի ափեր կատարած նրա արշավն անհաջող ավարտ է ունեցել, քանի որ Ամերիկայի բնիկները հարձակվել են անկոչ հյուրերի վրա եւ սպանել են Լեյֆի եղբորը:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

Մանկությա՞ն օրեր, ինչո՛ւ այդպես շուտ թռաք գնացիք, անդարձ հավիտյան...

Մ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
(1829-1866)
Հայ գրող, հրապարակախոս

Միշտ ցույց տալով, խրատելով պետք է մանկանն ուսուցանել՝ ո՞վ է, ի՞նչ է, որտեղի՞ց է, ո՞ւր կարող է ճամփան տանել:

ԴԱՎԻԹ ԳՈՒՐԱՄԻՆՎԻԼԻ
(1705-1791)
Վրաց բանաստեղծ

Տգետը զարմանում է, որ իրերը այնպիսին են, ինչպիսին որ կան, եւ այդպիսի զարմանքը գիտելիքների սկիզբն է. իմաստունը, ընդհակառակը, կզարմանար, եթե իրերը լինեին այլ կերպ, այլ ոչ թե այնպիսին, ինչպիսին նա գիտի դրանց:

ԱՐԻՍՏՈՏԵԼ
(մ.թ.ա.384-մ.թ.ա.322)
Հռոմեացի փիլիսոփա

Կարելի է լինել գիտնական գիտնականների հետ, բայց նկարիչների հետ հարկավոր է լինել բանաստեղծ:

ԲԱԼԶԱԿ
(1799-1850)
Ֆրանսիացի գրող

Դատավորները պիտի հիշեն, որ իրենց գործն օրենքը մեկնաբանելն է, այլ ոչ թե այն պարգեւելը:



ԲԵԿՈՆ
(1561-1626)
Անգլիացի փիլիսոփա

Մարդկանց մի մասը գործում է առանց խորհելու, մյուսը՝ խորհում է, բայց չի գործում:

ՖՈՍԿՈԼՈ
(1778-1827)
Իտալացի բանաստեղծ

Բամբասանքը կայծակ է, իսկ կայծակը ամենից բարձր ծառերին է հարվածում:

Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
«Վրաստանի» ընթերցող

Î°ê Î²Î²Î - Î°ê ÈàôðÆ

** Հաջողության հասած յուրաքանչյուր տղամարդու թիկունքին կանգնած են գոհ կինը եւ զարմացած զոքանչը:*

** Ում ասում եմ, որ զոքանչիս հետ թատրոն եմ գնացել, ոչ թե հարցնում է՝ ի՞նչ ներկայացում, այլ՝ հանուն ինչի՞:*

** Երբեք մի՛ զայրացեք, եթե ձեզ որեւէ մեկը վիրավորել է: Նման վիճակում դուք լավ վրեժ չեք մտածի:*

** Երբեք մի՛ պատմեք ձեր նոր ընկերուհուն այն սրիկայությունների մասին, ինչ ձեր հանդեպ արել են նախկինները: Չարժե նրանց գաղափար հուշել:*

** Մենք ավելի շատ սիրում ենք քննարկել այն իրերի թերությունները, որոնք ի վիճակի չենք գնելու:*

** Միշտ պետք է մարդկանց ասել այն, ինչ նրանց մասին մտածում ես: Ճշմարտությունը սուրբ գործ է, իսկ կապտուկները, միեւնույն է, մի շաբաթվա ընթացքում անցնում են:*

** Լավ է լինել խիզախ: Բայց սարսափելի է...*

** Եթե դու արդեն ամուսնացել ես նավթային մագնատի հետ, Նիցցայում դղյակ ես գնել եւ վիճակախաղով միլիոն դոլար ես շահել, դա նշանակում է, որ շուտով կգնգա զարթուցիչը:*

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՍՏՈՐԱԳՐՎԵՑԻՆ ՀԱՅ-ՀՈՒՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐԱՑՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Սեպտեմբերի 29-ին, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հրավերով, երկօրյա պաշտոնական այցով, Հայաստանում էր գտնվում Հունաստանի Հանրապետության նախագահ Կարոլոս Պապուլիասը:

Այցի շրջանակներում Հունաստանի նախագահը հանդիպումներ ունեցավ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի, Ազգային Ժողովի նախագահ Գալուստ Սահակյանի, վարչապետ Հովիկ Աբրահամյանի հետ, այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, ծաղկեպսակ դրեց Հայոց ցեղասպանության զոհերի հուշարձանին եւ հարգանքի տուրք մատուցեց նրանց հիշատակին:

Հայաստանի նախագահի նստավայրում անցկացվեց հայ-հունական հարաբերությունների ամրապնդմանն ու խորացմանն ուղղված փաստաթղթերի ստորագրման արարողություն, որից հետո նախագահներ Սերժ Սարգսյանը եւ Կարոլոս Պապուլիասը հանդես եկան բանակցությունների արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ:

Հունաստանի նախագահի այցի շրջանակներում Երեւանում երկու երկրների նախագահների մասնակցությամբ անցկացվեց հայ-հունական գործարար համաժողով: Հունաստանի նախագահը հանդիպում ունեցավ Հայաստանում հունական համայնքի հետ եւս:

Կարոլոս Պապուլիասը Հայաստանում այցելեց նաեւ «Գառնի» պատմամշակութային արգելոց-թանգարան:

ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Սեպտեմբերի 29-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունել է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) կառավարիչ Հելեն Քլարկին:

Հանդիպմանը երկուստեք կարեւորվել է ՄԱԿ-ի տարբեր կառույցների եւ հատկապես՝ ՄԱԶԾ-ի հետ Հայաստանի մշտական երկխոսությունն ու սերտ համագործակցությունը՝ ի նպաստ երկրի բարօրության:

Հելեն Քլարկն ընդգծել է, որ ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը Հայաստանում՝ հաստատակամորեն օժանդակելու երկրի զարգացմանը: Այդ առաքելության իրականացման եւ Հայաստան-ՄԱԿ զարգացման օժանդակության նոր շրջանակային փաստաթղթի մշակման նպատակով տիկին Քլարկը կարեւորել է ՀՀ կառավարության հետ Հայաստանի զարգացման գերակայությունների քննարկումը:

Հանդիպմանը զրուցակիցներն անդրադարձել են նաեւ տարածաշրջանի խնդիրներին եւ մարտահրավերներին:

ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՓՈՓԵՑ ՎԵՑԱՄՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հոկտեմբերի մեկին Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանն այցելեց Սփյուռքի նախարարություն եւ մասնակցեց նախարարության 6-ամյա գործունեության ամփոփմանը նվիրված միջոցառմանը:

Հովիկ Աբրահամյանը շնորհավորեց նախարարության աշխատակազմին՝ 6-ամյա արդյունավետ աշխատանքի կապակցությամբ եւ կարեւորեց գերատեսչության դերը հայապահպանության գործում:

Վարչապետը, բարձր գնահատելով Սփյուռքի նախարարության անցած տարիների ընթացքում կատարած աշխատանքները, կարեւորեց գերատեսչության դերը նաեւ Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության ամրապնդման գործում: «Այս եռամիասնության ամրապնդումն ուղղակիորեն բխում է հայ ժողովրդի շահերից»,- նշեց Հովիկ Աբրահամյանը:

Այնուհետեւ վարչապետը Հրանուշ Հակոբյանին պարգեւատրեց Հայաստանի վարչապետի անվանական ժամացույցով եւ հանձնեց նախարարության աշխատակազմը համալրած նոր քաղծառայողների վկայականները:

ԸՆԴԳԾՎԵՑԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Սեպտեմբերի 27-ին Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը Նյու Յորքում հանդիպում է ունեցել ԱՄՆ պետքարտուղարի փոխտեղակալ Վիկտորյա Նուլանդի հետ:

Հանդիպմանը քննարկվել է երկկողմ հարաբերությունների տարբեր բնագավառներին վերաբերող հարցերի լայն շրջանակ: Անդրադարձ է կատարվել հայ-ամերիկյան տնտեսական փոխգործակցության զարգացման հեռանկարներին: Այս առումով կարեւորվել են երկու երկրների միջեւ իրավապայմանագրային դաշտի ընդլայնման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Հանդիպման ընթացքում Հայաստանի ԱԳ նախարարը եւ ԱՄՆ պետքարտուղարի փոխտեղակալը մտքեր են փոխանակել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացի վերաբերյալ:

Զրուցակիցներն անդրադարձել են միջազգային, տարածաշրջանային հրատապ հարցերին:

ՎՐԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՕՐԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սեպտեմբերի 26-ին մեկնարկեցին եւ մինչեւ հոկտեմբերի 12-ը Հայաստանում կշարունակվեն Վրաստանի մշակույթի օրերը: Օրերի շրջանակներում Հայաստանում ելույթ կունենան «Սուխիշվիլու» պետական ակադեմիական ազգային պարային համույթը, Թբիլիսիի Գրիբոյեդովի անվան պետական ռուսական դրամատիկական թատրոնը, Ռոբերտ Ստուրուայի «Ֆաբրիկա» թատրոնը:

Օրերի շրջանակներում Հայաստանի մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը հյուրընկալեց հայտնի բեմադրիչ, Թբիլիսիի Շոթա Ռուսթավելու անվան թատրոնի գեղարվեստական ղեկավար Ռոբերտ Ստուրուային:

Հանդիպումն անցել է ջերմ ու անմիջական մթնոլորտում: Նշենք, որ սեպտեմբերի 27-ին եւ 28-ին Գ.Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում Ռոբերտ Ստուրուան ներկայացրեց Թբիլիսիի «Ֆաբրիկա» թատրոնի «Մարիա Կալլաս» բեմադրությունը (ըստ Թերրենս Մաքենելլիի): Ներկայացումը բեմադրվել է 2013 թվականին: «Մարիա Կալլաս» երեւանյան պրեմիերային ներկա է եղել նաեւ բեմադրիչը՝ Ռոբերտ Ստուրուան:

«ԷՐԵԲՈՒՆԻ-ԵՐԵՎԱՆԸ»՝ «ԵՐԵՎԱՆ՝ ԻՄ ՏՈՒՆ» ԿԱՐԳԱԽՈՍԻ ՆԵՐՔՈ

«Երեւան՝ իմ տուն» կարգախոսի ներքո հոկտեմբերի 11-12-ին Հայաստանի մայրաքաղաքում կանցկացվեն «Էրեբունի-Երեւան 2796»-ին նվիրված տոնակատարությունները:

Հոկտեմբերի 10-ին Հայաստանի ազգային պատկերասրահում կանցկացվի կոնֆերանս «Երեւան-2025» խորագրով: Իրադարձությանը կմասնակցեն հյուրեր տարբեր քաղաքներից, կքննարկվեն տարբեր խնդիրներ: Բացի այդ, կիրականացվի սոցիալական ծրագիր՝ քաղաքապետարանի եւ վարչական շրջանների աշխատակիցները նվերներով հյուր կգնան սոցիալապես անապահով 2796 ընտանիքների:

34 պատվիրակություն տարբեր երկրներից կժամանի Երեւան: Նրանց համար մշակված է առանձնահատուկ ծրագիր:

Տոնակատարությունների շրջանակում կանցկացվեն տարբեր միջոցառումներ, ցուցահանդեսներ, համերգներ:

«Էրեբունի-Երեւան 2796»-ի մշակութային ծրագրերի եւ կոնֆերանսի կազմակերպման համար համայնքային բյուջեից հատկացվել է 130 միլիոն դրամ, իսկ սոցիալական ծրագրի համար՝ 50 միլիոն դրամ: Քաղաքապետարանին աջակցել են բազմաթիվ այլ կազմակերպություններ:

ՀԱՆԳԻՊՈՒՄ՝ ՄԱԿ-Ի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՅԱՆՈՒՄ

Սեպտեմբերի 27-ին աշխատանքային այցով Ամերիկայի Միացյալ Նահանգներում գտնվող Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում է ունեցել Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) գլխավոր քարտուղար Բան Կի Մունի հետ:

Հանդիպմանը Սերժ Սարգսյանը եւ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը մտքեր են փոխանակել Նյու Յորքում ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 69-րդ նստաշրջանում քննարկված կարեւորագույն օրակարգային հարցերի շուրջ: Զրուցակիցները քննարկել են Հարավային Կովկասի կայունությանը եւ անվտանգությանը վերաբերող հարցեր: Հայաստանի նախագահը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին ներկայացրել է ԼՂ հիմնախնդրի խաղաղ կարգավորման բանակցային գործընթացի վերջին զարգացումները:

Սերժ Սարգսյանը վերահաստատել է Հայաստանի պատրաստակամությունը՝ շարունակելու ակտիվ ներգրավվածությունը ՄԱԿ-ի եւ նրա կառույցների գործունեությանը:

ՀԱՍՏԱՏՎԵՑ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Հայաստանի կառավարությունը հավանություն տվեց «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի նախագծին:

Հիշեցնենք, որ Հայաստանի նախագահը դեռեւս նախորդ տարվա սեպտեմբերի 3-ին հայտարարեց Մաքսային միությանը, իսկ հետագայում Եվրասիական միության ֆեւավորմանը միանալու որոշման մասին: Հայաստանը, համաձայն պայմանագրի, դառնում է ԵՏՄ-ի լիիրավ անդամ պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից: Պայմանագրով նախատեսվում է համատեղ որոշումների կայացում, Առեւտրի համաշխարհային կազմակերպության հետ վեճերի կարգավորման հարցերը:

Պայմանագրով սահմանված է նաեւ այն ապրանքների ցանկը, որոնց հանդեպ անցումային փուլում Հայաստանի համար կիրառվելու են միասնական մաքսային սակագներից տարբերվող ներմուծման այլ մաքսատուրքեր:

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ ԵՎԱԶՈՒՄ Է

Հայաստանի պետական պարտքն օգոստոսին նվազել է 31 մլն 698 հազար դոլարով եւ կազմել 4 մլրդ 493 մլն 557 հազար դոլար: Պետական պարտքի հաշվեկշռում արտաքին պարտքը կազմել է 3 մլրդ 795 մլն 150 հազար դոլար, որը նախորդ ամսվա համեմատ նվազել է 39 մլն 208 հազար դոլարով: Ներքին պարտքը օգոստոսին կազմել է 698 մլն 408 հազար դոլար, որը հուլիսի համեմատ ավելացել է 7 մլն 511 հազար դոլարով:

Արտաքին պարտքի կառուցվածքում Հայաստանի կառավարության պարտքը կազմել է 3 մլրդ 333 մլն 103 հազար դոլար, իսկ Կենտրոնական բանկի պարտքը՝ 462 մլն 47 հազար դոլար: Ներքին պարտքի կառուցվածքում Հայաստանի ռեզիդենտների կողմից ֆեռք բերված պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 657 մլն 700 հազար դոլար, Հայաստանի ռեզիդենտների կողմից ֆեռք բերված արտարժութային պետական պարտատոմսերի ծավալը՝ 32 մլն 407 հազար դոլար:

ՆԻԿՈԼԱՅ ՌԻԺԿՈՎԸ՝ 85 ՏԱՐԵԿԱՆ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը շնորհավորական ուղերձ է հղել Հայաստանի Ազգային Ժողովի եւ ՌԴ Դաշնային Ժողովի միջեւ միջխորհրդարանական համագործակցության հանձնաժողովի համանախագահ, Հայաստանի ազգային հերոս Նիկոլայ Ռիժկովին՝ ծննդյան 85-ամյակի առթիվ: Շնորհավորական ուղերձում, Հայաստանի նախագահը նշելով Նիկոլայ Ռիժկովի ծառայությունները, հոբելյարին մաղթել է քաջառողջություն եւ երկար տարիների կյանք, ընտանեկան բարօրություն, ներդաշնակություն եւ կենսական անսպառ եռանդ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐ

02.10.2014. Սուրբ Սահակ եւ Սուրբ Համազասպ Արծրունի իշխանների հիշատակության օր

04.10.2014. Քրիստոսի 72 աշակերտների հիշատակության օր

Բացի 12 առաքյալներից Հիսուս ուներ նաեւ 72 աշակերտ, ում Տերն ուղարկեց Բարի Լուրը քարոզելու բոլոր ազգերին: Ցավոք, Ավետարանում նշված չեն այդ աշակերտների անունները: Ավետարաններում «աշակերտ» բառն ընդհանրապես գործածվում է Քրիստոսի բոլոր հետեւորդների համար:

Հայ Առաքելական եկեղեցին Քրիստոսի աշակերտների հիշատակության օրը տոնում է Վարագա Սուրբ Խաչին հաջորդող շաբաթ օրը:

06.10.2014. Սուրբ Փոկաս հայրապետի եւ առաքյալներին հետեւող Սուրբ Երանոսի հիշատակության օր

ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏՈՆ



Հոկտեմբերի 12-ին, Նինոծմինդայի շրջանի Հեշտիա գյուղում կնշվի բանաստեղծ Վիկտոր Հովսեփյանի Պոեզիայի օրը: Ավանդական օրակարգով գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցում մատուցվող սուրբ պատարագից հետո տեղի կունենա այցելություն բանաստեղծի տուն-թանգարան եւ բանաստեղծի անունը կրող դպրոց: Տոնախմբության մասնակիցները ծաղիկներ կդնեն Հովսեփյանների տոհմական մատուռի գավթում հանգչող բանաստեղծի շիրմին: Ծրագրի երկրորդ մասում կտրվի համերգ, կհնչեն Հովսեփյանական պոեզիայի ընթերցումներ:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

ՋԱՆՍՈՒՂ ՉԱՐԿՎԻԱՆԻՆ՝ 83 ՏԱՐԵԿԱՆ



Լրացավ վրաց գրականության դասական, ժողովրդական պոետ, հայ ժողովրդի բարեկամ Ջանսուղ Չարկվիանու ծննդյան 83-ամյակը:

«Վրաստան» թերթի խմբագրության աշխատակազմը ի սրտե միանում է հոբելյանի առթիվ ժողովրդական բանաստեղծին ուղղված բարեմաղթանքներին եւ իր ու թերթի ընթերցողների կողմից բատոնի Ջանսուղին մաղթում քաջառողջություն, երկարակեցություն եւ ստեղծագործական նորանոր հաջողություններ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Թբիլիսիի Շոթա Ռուսթավելու անվան ազգային պետականորեն հավաստագրված համալսարանի հայ-վրաց լեզվի բանասիրական ֆակուլտետը հայտարարում է ընդունելություն:

Փաստաթղթերի ընդունելությունը՝ մինչեւ հոկտեմբերի 15-ը:

Թբիլիսիի Շոթա Ռուսթավելու անվան համալսարանին կից ավտորիզացված (հեղինակազորված) քոլեջը հայկական դպրոցների 9-րդ դասարանի բազայի վրա, հայտարարում է ընդունելություն 2014/2015թթ. ուսումնական տարվա համար հետեւյալ մասնագիտությամբ՝ համակարգիչ (համակարգչային համակարգերի եւ ցանցերի տեխնոլոգիա) եւ հայոց լեզու, գրականություն: Ուսման վարձը՝ տարեկան 1200 լարի: Քոլեջն ավարտելուց հետո ցանկացողները կարող են շարունակել ուսումն արդեն նույն համալսարանի հայ-վրաց բանասիրության ֆակուլտետում:

Հասցեն՝ Թբիլիսի, Մոսկովյան պողոտա 9ա հասցեով:

Ընդունելությունը՝ հարցազրույցով, մինչեւ նոյեմբերի 1-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ 240-11-88, 599-24-79-41, 595-09-39-97 593 10 21 46 հեռախոսահամարներով:

ՀԱՄԵՐԳ

ՏՈՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԲԱԹՈՒՄԻՈՒՄ

Սեպտեմբերի 25-ին, Բաթումիի Արվեստի կենտրոնում, Բաթումիում Հայաստանի գլխավոր հյուպատոսությունը կազմակերպեց միջոցառում՝ նվիրված Հայաստանի անկախության 23-րդ տարեդարձին:

Աջարահայության հոգեւոր հովիվ Արարատ քահանա Գումբալյանի օրհնանքից ու բացման խոսքից հետո ելույթ ունեցավ Բաթումիում Հայաստանի գլխավոր հյուպատոս Արամ Գրիգորյանը: Նա իր ելույթում առանձնակի կարեւորեց հայ-վրացական բարիդրացիական հարաբերությունները, խոսեց հայ ժողովրդի պատմության տարբեր ճակատագրական փուլերում Բաթումի քաղաքի դերի մասին:

Իր խոսքում Աջարիայի կրթության, մշակույթի եւ սպորտի նախարար Գիորգի Թավամաիշվիլին ընդգծեց վրաց եւ հայ ժողովուրդների եղբայրական հարաբերությունների դերն ու նշանակությունը համատեղ պատմության ողջ ընթացքում:

Միջոցառման ընթացքում ներկայացվել է Հայաստանի ժողովրդական վարպետ Կարինե Սահակյանի անհատական ցուցահանդեսը, ինչպես նաեւ հատուկ այդ առիթով Բաթումի ժամանած «Արցախի ձայներ» համույթի համերգը:

ՎԱՐԿԱՆԻՇ

ԱՄԵՆԱԱԶԱՏ ՄԱՄՈՒԼԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ



«Լրագրողներ առանց սահմանների» (Reporters Without Borders) կազմակերպությունը հրապարակել է մամուլի ազատության 2014 թվականի ինդեքսը:

Զեկույցի տվյալներով՝ Հայաստանն ու Վրաստանը մամուլի ազատության հարցում տարածաշրջանում ճանաչվել են առաջատար:

Ըստ ինդեքսի՝ Հայաստանը զբաղեցրել է 78-րդ հորիզոնականը, Վրաստանը 84-րդն է: Ինչ վերաբերում է տարածաշրջանի մյուս երկրներին, ապա Ադրբեջանը ինդեքսում 160-րդն է, Թուրքիան զբաղեցրել է 154-րդ հորիզոնականը, իսկ Ռուսաստանը՝ 148-րդը:

Ամենաազատ մամուլն ունեցող պետությունների տասնյակի մեջ մտնում են Ֆինլանդիան, Նիդերլանդները, Նորվեգիան, Լյուքսեմբուրգը, Անդորան, Լիխտենշտեյնը, Դանիան, Իսլանդիան, Նոր Զելանդիան եւ Շվեդիան:

ԽԱՉԲԱՌ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 2.Կենդանիների բերան, կլափ: 4.Լեռան ամենաբարձր մասը, կատար: 7.Միրգ, բերք: 8.Մոնղոլիայի մայրաքաղաքը ...-Բատոր: 9.Հայկական այբուբենի 31-րդ տառը: 10.Հեծյալ զորամաս, որ պատերազմի ժամանակ եւ հաղթությունից հետո ուղարկվում էր թշնամու երկիրը՝ գերի եւ ավար բերելու: 14.«... ընկավ դռնեդուռ»: 16.Հացահատիկը կալսելո տեղ, կալատեղ: 18.Արու ձի, նժույգ: 22.Ինչպես: 24.Հին ռազմանավ: 25.Վրաստանի արդարադատության նախարար ... Ծուլուկիանի: 26.ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության հուշարձան Մեքսիկայում Չիչեն-...: 28.Կայսրուհի, արքայակին: 31.Կաթնաշոռ, մածուն: 34.Բուստ, մարջան: 35.Անիմաստ, անբովանդակ: 36.Իտալիայի Կոմկուսի թերթը: 38.Թմրամոլի պաշտելի բույսը: 41.Ընդունված վարվելակերպ: 44.Հունական դիցաբանության մեջ մոռացության գետը ստորերկրյա աշխարհում: 45.Ամուսնու եղբայրը: 46.Պեպոյի քույրը: 48.Սենդարար հեղուկ: 50.Աքլոր: 51.Իսպանիայի պատմական քաղաք, Համաշխարհային ժառանգություն: 52.Պարեն, մթերք: 53.Lցրու (ժող.):

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Քաղաք Հայաստանի Լոռու մարզում: 2.Մագիլ, ճիրան: 3.Հեզ, հլու, հնազանդ: 4.Վիրուսային ինֆեկցիոն հիվանդություն: 5.Ջինվորական վերարկու: 6.Կարճահասակ մարդ, գաճաճ: 11.Մարդ, որ հիանում է բարձրաշխարհիկ հասարակությամբ, ամեն կերպ նմանակում նրանց ու ձգտում հայտնվել այդ հասարակության շարքերում: 12.Ծուլություն: 13.Հանրահայտ հայ կոմպոզիտոր, համաշխարհային դասական ... Խաչատրյան: 15.Գետ Նիդերլանդներում: 17.Լեզվաբան, հակագետ Մանուկ ...: 19.Գրական ժանր: 20.Քիմիական տարր, օգտագործում են ապակու արտադրության, լուսանկարչության մեջ: 21.Հեղուկի փոքրագույն մասը, շիթ: 23.Ցցապատ: 27.Հասարակածը եւ կենդանակերպը չորս հավասար մասերի բաժանող երկու մեծ բոլորակները: 29.Բարձրաձայն բղավել, աղաղակել: 30.Հավերժ: 32.Կարող: 33.Պարոն, տեր: 36.Թբիլիսիում ծնված հայ պատմաբան Արթուր ...: 37.Կինոյի եւ թատրոնի շվեդ ռեժիսոր ... Բերգման: 39.Գունավորել: 40.Գլխին փաթաթելու երկար նուրբ կտոր, չալմա: 42.Հայոց եկեղեցու կուսակրոն հոգեւորականության ամենացածր աստիճանի վանական: 43.Շվեդ դերասանուհի ... Գարբո: 46.Նյութական իմաստից զուրկ, քերականական զանազան հարաբերություններ արտահայտող խոսքի մաս: 47.Կաքավների ընտանիքին պատկանող փոքրիկ չվող թռչուն: 49.Եզդիականությանը ռեֆորմատոր Շեյխ:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 6.Անվարան: 9.Գարուն: 10.Թեթրի: 11.Բալասան: 12.Շուրիկ: 14.Միշել: 16.Կոմերիտական: 18.Ոսկան: 20.Անճար: 21.Կորեկ: 25.Ռուբլի: 26.Անասնագոմ: 28.Ենթակա: 29.Տաս: 30.Ամենուր: 31.Կիսալուսին: 33.Բնույթ: 34.Նավակ: 36.Բարաք: 40.Նազուկ: 41.Անբարոյական: 43.Պարտք: 44.Կարիճ: 45.Ծովակալ: 46.Տեխաս: 47.Շիրազ: 48.Ինսուլին:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Գնդապետ: 2.Ցավագին: 3.Քավարան: 4.Բարունակ: 5.Ռուբիկ: 7.Վերին: 8.Երբեմնի: 13.Կորեա: 14.Մաղում: 15.Ուսումնարան: 17.Ջարդուփշուր: 19.Նողկանք: 20.Ալիմյան: 22.Կնճիթ: 23.Աստառ: 24.Ցասում: 25.Ռոբին: 27.Նալ: 31.Կյանք: 32.Նամակ: 33.Բաժանել: 35.Կապիտան: 37.Նատո: 38.Հովասուն: 39.Գանա: 41.Ատյան: 42.Նազիկ: 49.Նա: 50.Իկ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445